



2016 թվականի փետրվարի 27-ին CCMS-ի («Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն») ՀԿ-ի գրասենյակում տեղի ունեցավ հանդիպում, որին հրավիրվել էին հանրակրթական դպրոցի տնօրեններ, փոխտնօրեններ, ուսուցիչներ, աշակերտներ, ծնողներ: Հանդիպման նպատակը կրթական համակարգում առակա խնդիրների վերհանում է նմանատիպ հանդիպումների և բանավեճերի կազմակերպման միջոցով:

Հերթական բանախոսության թեման է «Ծնողների ներգրավվածությունը աշակերտների ուսուցման գործընթացին» և այս անգամ անդրադարձ եղավ ,հետևյալ հարցերին

1. Ծնողների ներգրավման ի՞նչ քաղաքականություն է իրականացվում դպրոցներում:
2. Ինչպե՞ս է կառուցվում շփումը ընտանիքների հետ:
3. Որո՞նք են ժամանակակից դպրոցի հիմնական մարտահրավերները ծնողների ներգրավման հետ կապված:

Հանդիպման բանախոսներն էին

1 - Սպանդարյանի անվան թիվ 1 հիմն դպրոցի տնօրեն՝ Վահրամյան Սեդան,

2 - ք. Ալավերդիի թիվ 2 հիմն. դպրոցի փոխտնօրեն՝ Անահիտ Սարգսյանը,

3 - CCMS ՀԿ-ի տնօրեն Օլեգ Դուլգարյանը

4 - Արմվիրի մարզի Պետաշենի միջնակարգ դպրոցի «Կրթություն Հայաստան» նախաձեռնության մասնակից՝ Մանուկ Խաչատրյանը,

5 Ախթալայի թիվ 1 միջն դպրոցի տնօրեն Լեռնիկ Ճիճիլյանը

6- Սպանդարյանի անվան թիվ 1 հիմն դպրոցի աշակերտ՝ Համբարյան Ստեփան:

Բանախոսության ընթացքում մասնակիցները անդրադարձան ոչ միայն « ծնողին» այլ նաև ծնողական խորհուրդներին , երբ ծնողները պետք է լինեն ավելի ակտիվ, կապ լինի դպրոցների հետ ոչ միայն կազմակերպչական առումով, երբ ծնողներն ակտիվ են միջոցառումների ,էքսկուրսիաներ կազմակերպման ժամանակ : Ծնողական կոմիտեն իր ֆունկցիոնալ բնույթով և բովանդակային առումով պետք է լինի իրական և ոչ թե ֆորմալ, քանի որ այս խորհրդի առկայությունը օրենքի պահանջն է և հիմնականում այնտեղ ընդգրկված ծնողները չգիտեն իրենց իրավունքների մասին, խոսվեց արդյոք որքանով են դպրոցները շահագրգռված այս կոմիտեի ակտիվ աշխատաքով, ուսուցիչ ծնող փոխհարաբերությունը ինչպես է իրականացնում, խոսվեց նաև թվանշանի և ոչ թե գիտելիքի համար ծնողների ,, անհանգստության , միջամտության ,, մասին , երբ ծնողը կարևորում է նիշային արտահայտությունը : Բանախոսություն անցավ բավականին հետաքրքիր , բարձրացվեցին բազմաթիվ հարցեր, կար երկխոսություն, կարծիքների բախում:

TALK հարթակը նախաձեռնվել է «Կրթություն Հայաստան» ծրագրի շրջանակներում, որը իր մեջ ներառում է կրթության բարելավմանն ուղղված բաց քննարկումներ, բանախոսություններ, բանավեճեր և հնարավորություն է տալիս իրականացնել կրթության ոլորտում առկա խնդիրների վեր հանման, լուծման առաջարկների ամրագրում, հավաքագրում և որոշում կայացնողների համագործակցայնության ապահովման միջավայր:



